Երկրորդ ընթերցում
Նախագիծ
Կ-991[4]-30.09.2010-ՏՀ-010/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

<<ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ>> ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. <<Պետական տուրքի մասին>> Հայաստանի Հանրապետության 1997 թվականի հոկտեմբերի 27-ի ՀՕ-186 օրենքի (այսուհետ՝ օրենք) 19-րդ հոդվածի 6-րդ բաժնի 6.1-ին կետը, 9-րդ բաժնի 9.3-րդ կետը, 12-րդ բաժնի 12.2 կետ ը, 13-րդ բաժինը, 15-րդ բաժնի 15.1-րդ կետը, 17.1-րդ բաժինը, 18-րդ բաժնի 18.3-րդ, 18.4-րդ, 18.6-րդ, 18.9-րդ, 18.11-րդ և 18.13* կետերը, 19.2-րդ հոդվածի 1-ին մասն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 2. 19-րդ հոդվածում

1. 8-րդ մասի 8.1-րդ, 8.2-րդ, 8.3-րդ, 8.4-րդ կետերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

<<8.1	Նախադպրոցական կրթական ծրագրերի իրականացում		բազային տուրքի 10-ապատիկի չափով
8.2	Տարրական հանրակրթական ծրագրի իրականացում		բազային տուրքի 15-ապատիկի չափով
8.3	Հիմնական հանրակրթական ծրագրի իրականացում		բազային տուրքի 25-ապատիկի չափով
8.4	Միջնակարգ հանրակրթական ծրագրի իրականացում		բազային տուրքի 25-ապատիկի չափով>>

2. 10-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

<<10. ՄԱՔՍԱՅԻՆ ԲՆԱԳԱՎԱՌ

10.1.	մաքսային պահեստներում և ազատ մաքսային պահեստներում ապրանքների պահպանության համար՝ այդ թվում՝		
10.1.1.	մաքսային պահեստներում մաքսային հսկողության ներքո ապրանքների պահպանության համար՝ տարեկան		բազային տուրքի 1000-ապատիկի չափով
10.1.2.	ազատ մաքսային պահեստներում ապրանքների պահպանության համար՝		բազային տուրքի 2000-ապատիկի

	տարեկան		չափով
10.2.	անմաքս առևտրի խանութներում մաքսային հսկողության ներքո ապրանքների իրացման համար՝ տարեկան		բազային տուրքի 500-ապատիկի չափով
10.3.	մաքսային փոխադրողի գործունեության համար՝ տարեկան		բազային տուրքի 1000-ապատիկի չափով
10.4.	մաքսային հսկողության տարածքների կազմակերպման համար՝ տարեկան		բազային տուրքի 1000-ապատիկի չափով
10.5.	ազատ տնտեսական գոտիների կազմակերպման և շահագործման համար՝ այդ թվում՝		
10.5.1.	ազատ տնտեսական գոտիների կազմակերպման համար՝ տարեկան		բազային տուրքի 3000-ապատիկի չափով
10.5.2.	ազատ տնտեսական գոտիների շահա•ործման համար՝ տարեկան		բազային տուրքի 1000-ապատիկի չափով

Հոդված 3. 19-րդ հոդվածի 11-րդ բաժինը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

<<11. ԱՏՈՄԱՅԻՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

11.1.	միջուկային տեղակայանքների հրապարակի ընտրման համար՝ տարեկան		բազային տուրքի 1000-ապատիկի չափով
11.2.	ռադիոակտիվ թափոնների պահեստարանների հրապարակի ընտրման համար՝ տարեկան		բազային տուրքի 500-ապատիկի չափով
11.3.	ռադիոակտիվ թափոնների գերեզմանոցների հրապարակի ընտրման համար՝ տարեկան		բազային տուրքի 500-ապատիկի չափով
11.4.	միջուկային տեղակայանքների նախագծման համար՝ տարեկան		բազային տուրքի 1000-ապատիկի չափով
11.5.	ռադիոակտիվ թափոնների պահեստարանների նախագման համար՝ տարեկան		բազային տուրքի 500-ապատիկի չափով
11.6.	ռադիոակտիվ թափոնների գերեզմանոցների նախագման համար՝ տարեկան		բազային տուրքի500-ապատիկի չափով
11.7.	միջուկային տեղակայանքների կառուցման համար՝ տարեկան		բազային տուրքի1000-ապատիկի չափով
11.8.	ռադիոակտիվ թափոնների պահեստարանների կառուցման համար՝ տարեկան		բազային տուրքի 500-ապատիկի չափով
11.9.	ռադիոակտիվ թափոնների գերեզմանոցների կառուցման համար՝ տարեկան		բազային տուրքի 500-ապատիկի չափով
11.10	միջուկային տեղակայանքների շահագործման համար՝ տարեկան		բազային տուրքի 1000-ապատիկի չափով

11.11.	ռադիոակտիվ թափոնների պահեստարանների շահագործման համար՝ տարեկան		բազային տուրքի 10-ապատիկի չափով
11.12	ռադիոակտիվ թափոնների գերեզմանոցների շահագործման համար՝ տարեկան		բազային տուրքի 10-ապատիկի չափով
11.13.	միջուկային տեղակայանքները շահագործումից հանելու համար՝ տարեկան		բազային տուրքի 1000-ապատիկի չափով
11.14.	ռադիոակտիվ թափոնների պահեստարանները շահագործումից հանելու համար՝ տարեկան		բազային տուրքի 10-ապատիկի չափով
11.15.	ռադիոակտիվ թափոնների գերեզմանոցները շահագործումից հանելու համար՝ տարեկան		բազային տուրքի 10-ապատիկի չափով
11.16.	միջուկային նյութերի ներմուծման կամ արտահանման համար՝ տարեկան		բազային տուրքի 20-ապատ իկի չափով
11.17.	ռադիոակտիվ նյութերի կամ ռադիոակտիվ նյութեր պարունակող սարքերի ներմուծման կամ արտահանման համար տարեկան		բազային տուրքի 10-ապատիկի չափով
11.18.	ռադիոակտիվ թափոնների ներմուծման կամ արտահանման համար՝ տարեկան		բազային տուրքի 10-ապատիկի չափով
11.19.	միջուկային նյութերի օգտագործման համար՝ տարեկան		բազային տուրքի 10-ապատիկի չափով
11.20.	միջուկային նյութերի փոխադրման համար՝ տարեկան		բազային տուրքի 10-ապատիկի չափով
11.21	միջուկային նյութերի պահեստավորման համար՝ տարեկան		բազային տուրքի 10-ապատիկի չափով
11.22	միջուկային նյութերի արտադրության համար տարեկան		բազային տուրքի 2000-ապատիկի չափով
11.23.	ռադիոակտիվ նյութերի արտադրության կամ օգտագործման կամ փոխադրման կամ պահեստավորման համար՝ տարեկան		բազային տուրքի 10-ապատիկի չափով
11.24.	ռադիոակտիվ նյութեր պարունակող սարքերիարտադրության կամ օգտագործման կամ վերանորոգման կամ մոնտաժման և կարգաբերման կամ փոխադրման համար՝ տարեկան		բազային տուրքի 10-ապատիկի չափով
11.25.	գեներացնող ճառագայթման աղբյուրների բազային տուրքի օգտագործման կամ կարգաբերման համար՝ տարեկան		բազային տուրքի 10-ապատիկի չափով
11.26.	ռադիոակտիվ թափոնների հետ աշխատանքների կատարման՝ վերամշակման համար՝ տարեկան		բազային տուրքի 5-ապատիկի չափով
11.27.	ռադիոակտիվ թափոնների հետ աշխատանքների կատարման՝ պահման համար՝ տարեկան		բազային տուրքի 5-ապատիկի չափով
11.28.	միջուկային տեղակայանքների եւ միջուկային բազային տուրքի նյութերի ֆիզիկական պաշտպանության իրականացման համար՝ տարեկան		բազային տուրքի 50-ապատիկի չափով
11.29.	ատոմային էներգիայի օգտագործման օբյեկտների համար անվտանգության		բազային տուրքի 50-ապատիկի չափով

	տեսակետից կարեւոր սարքերի, սարքավորումների, համակարգերի նախագծման համար՝ տարեկան		
11.30.	ատոմային էներգիայի օգտագործման օբյեկտների համար անվտանգության տեսակետից կարեւոր սարքերի, սարքավորումների, համակարգերի պատրաստման համար՝ տարեկան		բազային տուրքի 100-ապատիկի չափով
11.31.	ատոմային էներգիայի օգտագործման օբյեկտների նախագծերի և այլ փաստաթղթերի փորձաքննության համար՝ տարեկան		բազային տուրքի 50-ապատիկի չափով
11.32.	ատոմային էներգիայի օգտագործման բնագավառում անվտ անգության ապահովման տեսակետից կարեւոր պաշտոններ զբաղեցնող ֆիզիկական անձանց գործունեության համար՝ տարեկան		բազային տուրքի 10-ապատիկի չափով>>

Հոդված 4. օրենքի 19-րդ հոդվածի 16-րդ բաժինը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

<<16. ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

16.1	Քաղաքաշինական փաստաթղթերի մշակման և փորձաքննության համար՝ տարեկան		բազային տուրքի 200-ապատիկի չափով
16.2	Շինարարության իրականացման համար՝ տարեկան		բազային տուրքի 400-ապատիկի չափով
16.3	Շինարարության որակի տեխնիկական հսկողության համար՝ տարեկան		բազային տուրքի 250-ապատիկի չափով
16.4	Ինժեներական հետազննման համար՝ տարեկան		բազային տուրքի 50- ապատիկի չափով
16.5	Շենքերի և շինությունների տեխնիկական վիճակի հետազննության համար՝ տարեկան		բազային տուրքի 100-ապատիկի չափով>>

Հոդված 5. օրենքի 19-րդ հոդվածի 18-րդ բաժնի 18.12* բաժինը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«18.12 Թմրամիջոցների կամ հոգեմետ նյութերի կամ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանված դրանց պրեկուրսորների՝			
	- արտադրություն՝ տարեկան		բազային տուրքի 100-ապատիկի չափով
	- արտահանում, ներմուծում կամ մեծածախ առևտուր՝ տարեկան		բազային տուրքի 100-ապատիկի չափով>>

Հոդված 6. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2011 թվականի հունվարի 1-ից:

Տեղեկանք

ՀՀ Ազգային ժողովի 2010 թվականի հոկտեմբերի 5-ի նիստում առաջին ընթերցմամբ ընդունված <<Լիցենզավորման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին և դրանից բխող այլ օրենքներում լրացումներ և փոփոխություններ կատարելու վերաբերյալ ՀՀ օրենքների նախագծերի վերաբերյալ ՀՀ արդարադատության նախարարության պետական փորձագիտական եզրակացության վերաբերյալ

Առաջարկության հեղինակը		Առարկության, առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն
1	2	3	4
ՀՀ արդարադատության նախարարություն 2010-10-26 01/3858-10	1.	<<Պետական տուրքի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերնագրից անհրաժեշտ է հանել <<և լրացումներ>> բառերը, քանի որ նախագծի տեքստում նախատեսված են միայն փոփոխություններ:	Ընդունվել է, կատարվել է համապատասխան փոփոխություն:
	2.	<<Թանկարժեք մետաղների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում և փոփոխություններ կատարելու մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի /այսուհետ՝ Նախագիծ/ վերնագրում <<լրացում>> բառն անհրաժեշտ է փոխարինել <<լրացումներ>> բառով, քանի որ նախագծի տեքստում նախատեսված են մեկից ավելի լրացումներ:	Ընդունվել է, կատարվել է համապատասխան փոփոխություն:
	3.	<<Թանկարժեք մետաղների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում և փոփոխություններ կատարելու մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 10-րդ հոդվածով նախատեսված 15.1-րդ հոդվածի կապակցությամբ գտնում ենք, որ լիազոր մարմինը կարող է անձին զրկել որակավորումից միայն էական նշանակություն ունեցող խախտումների դեպքում այլ ոչ թե բոլոր տեսակի խախտումների դեպքում: Ելնելով վերոհիշյալից, անհրաժեշտ է հստակ նշել իրավական ակտերի այն խախտումները, որոնց առկայության պայմաններում անձը կարող է զրկվել որակավորումից:	Չի ընդունվել է, քանի որ օրենքի նախագծով հստակ սահմանվում են այն խախտումները, որոնց առկայության պայմաններում անձը կարող է զրկվել որակավորումից:
	4.	<<Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 1-ին հոդվածի կապակցությամբ հայտնում ենք, որ <<Իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ իրավական ակտում փոփոխությունները կատարվում են նրա առանձին բաժինների, գլուխների, հոդվածների, մասերի, կետերի կամ պարբերությունների գործողությունը դադարեցնելու միջոցով:	Ընդունվել է, կատարվել է համապատասխան փոփոխություն:
	5.	<<Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 1-ին հոդվածում անհրաժեշտ է ճիշտ նշել օրենքի ընդունման տարեթիվը, մասնավորապես՝ <<2004>> թիվն անհրաժեշտ է փոխարինել <<2003>> թվով:	Ընդունվել է, կատարվել է համապատասխան փոփոխություն:
	6.	<<Հանրակրթության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 1-ին հոդվածում <<կետից>> բառն անհրաժեշտ է փոխարինել <<մասից>> բառով՝ նկատի ունենալով	Ընդունվել է, կատարվել է համապատասխան

		<<Իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները, որոնց համաձայն՝ ՀՀ օրենքների հոդվածները բաժանվում են <<մասեր>> կոչվող միայն համարակալված պարբերությունների:	փոփոխություն:
	7.	<<Խաղաղ նպատակներով ատոմային էներգիայի անվտանգ օգտագործման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի /այսուհետ՝ Նախագիծ/ վերնագրում <<փոփոխություն>> բառն անհրաժեշտ է փոխարինել <<փոփոխություններ>> բառով, քանի որ նախագծի տեքստում նախատեսված են մի քանի փոփոխություններ: Նախագծի 1-ին հոդվածում անհրաժեշտ է ճիշտ նշել օրենքի ընդունման տարեթիվը, մասնավորապես՝ <<1999>> թիվն անհրաժեշտ է փոխարինել <<1998>> թվով:	Ընդունվել է, կատարվել են համապատասխան փոփոխություններ:
	8.	<<Անշարժ գույքի գնահատման գործունեության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերնագրում <<փոփոխություններ>> բառն անհրաժեշտ է փոխարինել <<փոփոխություն>> բառով, քանի որ նախագծի տեքստում ընդամենը մեկ փոփոխություն է կատարվում:	Ընդունվել է, կատարվել է համապատասխան փոփոխություն:
	9.	<<Անասնաբուժության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերնագրում <<փոփոխություն>> բառն անհրաժեշտ է փոխարինել <<փոփոխություններ>> բառով, քանի որ նախագծի տեքստում նախատեսված են մի քանի փոփոխություններ:	Ընդունվել է, կատարվել են համապատասխան փոփոխություն:
	10.	<<Լիցենզավորման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին>>, <<Հայաստանի Հանրապետության մաքսային օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին>>, <<Մշակութային արժեքների արտահանման և ներմուծման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում և փոփոխություն կատարելու մասին>>, <<Մթնոլորտային օդի պահպանության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին>>, <<Սնանկության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին>>, <<Թմրամիջոցների և հոգեմետ /հոգեներգործուն/ նյութերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին>>, <<Գեոդեզիայի և քարտեզագրության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին>> և <<Ավիացիայի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի վերաբերյալ առաջարկություններ չունենք:	

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

<<ՀՀ լիցենզավորման մասին օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին>> ՀՀ օրենքի նախագծի և դրանից բխող այլ իրավական ակտերում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ ՀՀ Ազգային ժողովի առաջին ընթերցման ժամանակ կատարված առաջարկությունների մասին

Առաջարկության հեղինակը		Առարկության, առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն
1	2	3	4
ՀՀ կառավարություն	1	Օրենքով սահմանել այնպիսի դրույթ համաձայն որի լիցենզիա ստանալու հայտը լիցենզավորող մարմնի կողմից օրենքով սահմանված ժամկետում չմերժվելու դեպքում հայտատուն համարվի լիցենզավորված և իրավունք ունենա զբաղվելու տվյալ լիցենզավորման ենթակա տվյալ գործունեության տեսակով	Ընդունվել է: <<Լիցենզավորման մասին>> ՀՀ օրեքի 29-րդ հոդվածի 2-րդ մասում նախատեսվում է լրացում, համաձայն որի լիցենզիա ստանալու հայտը լիցենզավորող մարմնի կողմից օրենքով սահմանված ժամկետում չմերժվելու դեպքում հայտատուն համարվում է լիցենզավորված և այդ օրվանից իրավունք ունի զբաղվելու տվյալ լիցենզավորման ենթակա գործունեության տեսակով:
ՀՀ կառավարություն	2	Սահմանել, որ թմրամիջոցների և հոգեմետ նյութերի պրեկուրսորների ցանկը սահմանում է ՀՀ կառավարությունը	Ընդունվել է: <<Լիցենզավորման մասին>> ՀՀ օրեքի 43-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանած աղյուսակի նշվել է, որ պրեկուրսորների ցանկը սահմանում է կառավարությունը: